

մը չյանգեցան. ինչպէս կ'իմացուի 3 Յուլ. 1848ին Պիոս Թ.ի առ Մետրապոլիտն գրած կոնդալէն: Ասոր մէջ Ս. Քահանայապետը թախծութեամբ կը գրէ՝ թէ այլեւայլ դժուարութիւններ պատճառ կ'ըլլան, որ հակառակ իր ջերմ բաղձանքին՝ Ռուսիոյ արեւելեան ծէսի կաթողիկէներն, ինչպէս Ռութէնները եւ մանաւանդ Հայերն իրենց սեպհական եպիսկոպոսներն ունենան, որպէս զի աւելի դիւրութեամբ ընթանան ի ճանապարհին փրկութեան, կարելի չեղաւ տակաւին նոյնը գործադրել. անոր համար կը հրամայէ լատին Մետրապոլիտին՝ որ ամէն կերպով պահպանէ արեւելեան Եկեղեցւոյ արարողութիւնները եւ մեծ ուշադրութիւն դարձնէ անոնց:

Վերջապէս մեր օրերն առանձինն ջանքով կովկասի հայ կաթողիկէ հասարակութեան, գտնուեցաւ երկակողմանի լուծումը, եւ 12 Սեպ. 1909ի կայսերական ուկազով Գեր. Սարգիս Վ. Տէր-Աբրահամեան անուանուեցաւ «Առաքելական Կառավարիչ», եպիսկոպոսական լիուլի իրաւասութեամբ, Ռուսաց պետութեան սահմանի մէջ գտնուող բովանդակ կաթողիկէ Հայերու համար, եպիսկոպոսական Կարգ տրուիլը վերապահելով մերձաւոր ժամանակի. իսկ արժողանիստ քաղաքն որոշուեցաւ Տփղիս: